ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳԵՐԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Քրիստինա Խաչատրյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների համատեքստում (մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիա, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ՄԱԿ-ի կոնվենցիա, Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ, Եվրոպական բանտային կանոններ և դրանց հետ կապված այլ միջազգային փաստաթղթեր) շեշտադրվում է միջազգային չափանիշներին համահունչ քրեակատարողական համակարգ ունենալու, ինչպես նաև կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների պաշտպանության ապահովման պատշաճ համակարգ ունենալու անհրաժեշտությունը:

Հիշյալ խնդիրներին անդրադարձ է կատարվում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանին վերաբերող մի շարք վճիռներում: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի[1], Դավթյանն ընդդեմ Հայաստանի[2] վճիռների համաձայն՝ մատնանշվում է ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման, մասնավորապես ֆիզիկական անձեռնմխելիության, այդ թվում՝ անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու, անհրաժեշտ դեղամիջոցների առկայությունը երաշխավորելու միջոցով նրանց պաշտպանելու պարտականության ապահովման անհրաժեշտությունը:

Եվրոպական իրավական չափանիշներին համապատասխան քրեակատարողական համակարգ ունենալու համատեքստում որպես քրեակատարողական համակարգի բարեփոխումների գերակա ուղղություններից մեկը շարունակում է մնալ «գերբեռնվածության» նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Հարկ է նշել, որ եվրոպական բանտերում գերբեռնվածությունը հաճախ հանդիպող երևույթ է: Այն նույնիսկ մտահոգիչ խնդիր է ժամանակակից բանտերի համար[3]: Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններից շատերն ունեն գերբեռնված բանտեր, և նույնիսկ այն երկրներում, որտեղ ազատությունից զրկված անձանց թիվը չի գերազանցում բանտերի լրակազմը, դեռ կան գերբեռնված բանտեր:

Եվրոպայի խորհուրդը ներպետական իշխանություններին մշտապես հորդորել է լուծել ուղղիչ հիմնարկների գերբեռնվածության և անազատության մեջ պահվող

[1] http://www.court.am/files/news/1831_am.pdf
[2] http://static.echr.am//judgments/1abc85c44171af0998601002837e225e.pdf
[3] Տե՛ս **Mullen, J.** Prison Crowding and the Evolution of Public Policy. National Institute of Corrections: Our Crowded Prisons. The Annals of the American Academy of Political and Social Science. Vol. 478, Beverly Hills 1985, pp.31-46, էջ 31:

անձանց թվաքանակի աճի խնդիրը՝ այն ներկայացնելով որպես բանտերի վարչակազմի և արդարադատության համակարգի առջև ծառացած խնդիր մարդու իրավունքների պաշտպանության և քրեակատարողական հիմնարկների կառավարման տեսանկյունից:

Ի՞նչ է բանտերի «գերբեռնվածությունը»: Գերբեռնվածության վերաբերյալ չկան միջազգայնորեն սահմանված հստակ բնորոշումներ կամ չափորոշիչներ: Ընդհանուր առմամբ այս երևույթը առկա է այն դեպքերում, երբ պետության ուղղիչ հիմնարկների կամ որոշակի ուղղիչ հիմնարկի լրակազմի ամբողջությամբ զբաղեցվածության պայմաններում ազատությունից զրկված անձանց համար չի ապահովվում անհրաժեշտ, նվազագույն տարածության միավոր[1]:

1999 թվականի սեպտեմբերի 30-ին ԵԽ Նախարարների կոմիտեն ընդունեց թիվ R (99) 22 Հանձնարարականը, որը վերաբերում էր բանտերի գերբեռնվածությանը և ազատազրկվածների թվի աճին, և մի շարք առաջարկություններ էր պարունակում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ոլորտներում կյանքի կոչելու համար:

Թեև Հանձնարարականի ընդունումից անցել է 16 տարի, այնուամենայնիվ խնդիրն արդիական է ինչպես Եվրոպայում[2], այնպես էլ աշխարհի այլ երկրներում:

Բանտերի գերբեռնվածության խնդրին լուծում է տրվում ինչպես մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում հստակ չափորոշիչներ սահմանելով, այնպես էլ դատարանների կողմից որոշակի փաստական հանգամանքների շրջանակում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) դրույթները մեկնաբանելով, որոնց ձևավորած նախադեպային իրավունքի տրամաբանությամբ գերբեռնվածությունը դիտվում է որպես Կենվենցիայի 3-րդ հոդվածի խախտմանը հանգեցնող գործոն:

Նախարարների կոմիտեի հանձնարարականները սահմանում են միջազգային չափորոշիչներին համապատասխան բանտային պայմանները և ազատազրկվածներին ցուցաբերվող վերաբերմունքի այն հիմնական սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվեն անդամ պետությունները: Բացի թիվ (99) 22 Հանձնարարականից, բանտային պայմանների չափորոշիչներ են պարունակում Նախարարների կողմիտեի ընդունած թիվ (2006)2 Եվրոպական բանտային կանոնները (ընդունվել է 2006 թվականի հունվարի 11-ին Նախարարների տեղակալների 952-րդ նիստի ընթացքում)[3]:

---

[1] European Committee on Crime Problems. Council for Penological Co-operation (PC-CP) “White Paper on Prison Overcrowding”. Strasbourg 2015, էջ 3:

[2] Council of Europe Annual Penal Statistics (SPACE I, 2014) (2015-2016 թթ. ԵԽ անդամ պետությունների ուղղիչ հիմնարկներում պահվող անձանց թիվը նվազել է 56.700-ով: Թեև վերջին ժամանակահատվածում ազատությունից զրկված անձանց թիվը նվազել է, այնուամենայնիվ՝ Եվրոպայում ազատությունից զրկված անձանց մեդիանայի մակարդակը 2015-2016 թթ. բարձրացել է 5%-ով: 2015 թվականին 100.000 բնակչի հաշվով ազատազրկվածների թիվը 127 էր, իսկ 2016-ին այդ թիվը հասել է 134-ի: 2015 և 2016 թվականներին գերբնակեցվածության խնդիրը սուր էր եվրոպական 21, իսկ 2014 թվականին՝ 23 քրեակատարողական համակարգերում):

[3] 18.1 Ազատազրկվածներին տրամադրվող բնակելի տարածությունը, մասնավորապես՝ քնելու տեղը և պարագաները, պետք է համապատասխանեն մարդկային արժանապատվությանը և հնավարորինս՝ անձնական կյանքի գաղտնիությանը, ինչպես նաև պետք է համապատասխանեն վերջիններիս առողջությանն ու հիգիենային՝ հաշվի առնելով կլիմայական պայմանները և բնակտարածության մակերեսը, թթվածնի ծավալը, լուսավորությունը, ջեռուցումը և օդափոխությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Դատարան) իր մի շարք որոշումներում անդրադարձել է ուղղիչ հիմնարկների գերբեռնվածության խնդրին՝ համարելով այն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտմանը հանգեցնող գործոն: Դատարանը գերբեռնվածության հետ կապված որդեգրել է երկու մոտեցում. մի դեպքում գերբեռնվածությունն ուղղակիորեն չի դիտում որպես Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում, այլ ավելի շուտ ուսումնասիրում է ազատությունից զրկելու հետևանքները՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը և այլ հանգամանքներ (այդ թվում՝ քնելատեղով ապահովված լինելը, բնական լույսի և մաքուր օդի հասանելիություն, անձնական կյանքի գաղտնիություն և այլն): Օրինակ՝ Անանևը և մյուսները ընդդեմ Ռուսաստանի[1] գործով Դատարանը նշում է, որ գերբեռնվածության որոշման համար անհրաժեշտ է հետևյալ հանգամանքների առկայությունը. *«1) յուրաքանչյուր կալանավորված անձ պետք է ունենա անհատական քնելատեղ, 2) պետք է ապահովված լինի 3 քառ. մետր բնակելի տարածքով, 3) խցի ընդհանուր մակերեսը պետք է ազատ տեղաշարժվելու հնարավորություն տա կալանավորված անձանց»:*

Վլադիմիր Բելյաևն ընդդեմ Ռուսաստանի գործով Դատարանը գտնում է, որ առկա չէ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում, քանի որ դիմողը թեև որոշակի ժամանակահատված ապահովված չի եղել 3 քառ. մետր բնակելի տարածությամբ, այնուամենայնիվ ապահովված է եղել անհատական քնելատեղով, օգտվել է ամենօրյա զբոսանքից և հնարավորություն է ունեցել ազատորեն տեղաշարժվելու իր խցում:

Մյուս դեպքում Դատարանը գտնում է[2], որ դիմողը ազատազրկման վայրում զրկված է եղել 3 քառ. մետր բնակելի տարածությունից, ինչն ուղղակիորեն հանգեցրել է այն դիրքորոշմանը, որ առկա է Կենվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Մասնավորապես, Օլզևսկին ընդդեմ Հոլանդիայի գործով[3] Դատարանը նշում է՝ կալանավորված անձանց՝ իրենց խցերում 3 քառ. մետր բնակելի տարածությունից զրկված լինելու բոլոր դեպքերը պետք է համարել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման ցուցիչ՝ հաշվի առնելով ազատությունից զրկման ժամանակահատվածը:

Հարկ է նշել, որ բնակելի տարածքի նյութակենցաղային պայմանները, խցերի մակերեսից և ընդհանուր վիճակից բացի, ներառում են նաև բնական լույսի և թարմ օդի առկայությունը: Եվրոպական բանտային կանոնների 18-րդ կետի համաձայն՝ անձը որքան շատ ժամանակ է անցկացնում խցում, այնքան ավելի շատ են զգաց-

---

18.2 Այն բոլոր կառույցներում, որտեղ ապրում, աշխատում կամ հավաքվում են ազատազրկվածներ.

ա) պատուհանները պետք է բավարարաչափ մեծ լինեն, որպեսզի ազատությունից զրկված անձինք բնական լույսի ներքո կարդալու և աշխատելու հնարավորություն ունենան, և պետք է ապահովվեն թարմ օդով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է բավարար օդափոխության համակարգ, բ) արհեստական լուսավորությունը պետք է բավարարի ընդունված տեխնիկական չափորոշիչներին, և գ) պետք է լինի ահազանգման համակարգ, որը ազատությունից զրկված անձանց հնարավորություն կտա անհապաղ կապ հաստատել վարչակազմի հետ:

18.4 Ներպետական օրենսդրությամբ պետք է ապահովվեն մեխանիզմներ, որպեսզի այս նվազագույն չափորոշիչները չխախտվեն ուղղիչ հիմնարկների գերբեռնվածությամբ:

[1] Ananyev and Others v. Russia, nos. 42525/07 and 60800/08, 10 January 2012, §148.

[2] Iacov Stanciu v. Romania, no. 35972/05, 22 October 2009, §§ 123 and 135.

[3] Olszewski v. Poland, no., 21880/03, 2 April 2013, § 98.

վում գերբեռնվածության ազդեցությունը և ազատազրկման հակահիգիենիկ պայմանները:

Այս առումով ևս Դատարանը նույն մոտեցումն է ցուցաբերել՝ նշելով՝ անկախ այն բանից, թե ազատազրկման վայրում բավարար չափով բնակելի տարածություն առկա է, թե ոչ, այն պետք է դիտարկել ազատ տեղաշարժման, բնական լույսի, մաքուր օդի և օդափոխության հասանելիության, ինչպես նաև հիմնական սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանության համատեքստում[1]:

Նույնիսկ այն դեպքերում, երբ Կենվենցիայի 3-րդ հոդվածի խախտում ուղղակիորեն չի արձանագրվում, գերբեռնվածությունը բավականին խնդրահարույց է՝ ազատությունից զրկված անձանց վրա իր բացասական ազդեցության, մասնավորապես՝ նրանց առողջության, վերասոցիալականացմանն ուղղված ծրագրերին մասնակցելու հնարավորության բացակայության և ընդհանուր առմամբ քրեակատարողական համակարգի կառավարման, կանոնակարգի պահպանման տեսանկյունից:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ ԽԿԿ) իր պարբերական և հատուկ (ad hoc) այցելությունների ընթացքում մշտապես անդրադառնում է գերբեռնվածության խնդրին և այս կապակցությամբ 20-րդ դարի 90-ական թվականներից ի վեր ազատությունից զրկված անձանց տրամադրվող բնակելի տարածության վերաբերյալ մշակել է նվազագույն չափորոշիչներ, որոնց պետք է հետևեն անդամ պետությունները գերբեռնվածության խնդրին առնչվելիս: Թեև այդ չափորոշիչները հաճախ են օգտագործվել ԽԿԿ զեկույցներում, սակայն մինչ այժմ դրանք չեն ընդգրկվել մեկ փաստաթղթում:

Հատկանշական է, որ այս չափորոշիչների նկատմամբ մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում ներպետական և միջազգային մակարդակներով ոչ միայն գերբեռնվածության խնդրի և դրանից բխող հետևանքների, այլև այն պատճառով, որ ներկայումս ԵԽ Ուղղիչ համագործակցության խորհուրդը բանտերի գերբեռնվածության վերաբերյալ «Սպիտակ թուղթ» է մշակում: Այս փաստաթղթի նպատակը ԽԿԿ-ի դիրքորոշումները և բնակելի տարածության նվազագույն չափորոշիչներ սահմանելն է:

ԽԿԿ-ն գտնում է, որ բնակելի տարածության նվազագույն չափի հարցը անխզելիորեն կապված է ԵԽ անդամ պետությունների՝ ազատությունից զրկված անձանց արժանապատվությունը հարգելու պարտավորության հետ:

Ուղղիչ հիմնարկների բնակելի տարածության կապակցությամբ ԽԿԿ-ն նշում է, որ այս ոլորտում կա հստակ ուղեցույցի կարիք: Մասնավորապես, ԽԿԿ-ի կարծիքով՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի համար 3 քառ. մետրը բավարար չէ, և առաջարկվում է ուղղիչ հիմնարկների խցերը գնահատելիս դրանց նվազագույն չափը սահմանել առնվազն 4 քառ. մետր, ընդ որում՝ պատերի միջև հեռավորությունը պետք է լինի 2 կամ ավելի մետր, իսկ առաստաղի և հատակի միջև՝ 2,5 մետրից ոչ պակաս[2]:

---

[1] Sergey Babushkin v. Russia; Kulikov v. Russia, no. 48562/06, 27 November 2012, § 37; and Yepishin v. Russia, no., 591/07, 27 June 2013, § 65.

[2] Criminal Justice Responses to Prison Overcrowding in Eastern Partnership Countries. Regional project Promoting penitentiary reforms (from a punitive to a rehabilitative approach) 2016, էջ 58:

ԽԿԿ-ի այլ չափորոշիչների[1] համաձայն՝ նման նվազագույն չափը վերաբերելի է միայն բազմամարդ բնակելի կացարաններին, որոնց մեջ սանհանգույցները չեն ներառվում: Մենախցերի համար ԽԿԿ չափորոշիչը սահմանվում է նվազագույնը 6 քառ. մետր՝ չհաշված սանհանգույցը:

Այս առումով հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մշտապես ձեռնպահ է մնացել Կոնվենցիայի համատեքստում սահմանել ազատությունից զրկված անձանց համար բնակելի տարածության նվազագույն չափը՝ նշելով, որ այն յուրաքանչյուր դեպքում պայմանավորված է որոշակի հանգամանքներով[2]:

Անհրաժեշտ է նշել, որ «նվազագույն բնակելի տարածության» հարցը այնքան էլ պարզ չէ, որքան առաջին հայացքից է թվում: Նախ, ԽԿԿ-ի կողմից օգտագործվող «նվազագույն բնակելի տարածության» չափորոշիչը, կառույցի տեսակով պայմանավորված, փոփոխական է: Օրինակ՝ մի քանի ժամից մի քանի օր ձերբակալման համար նախատեսված՝ ոստիկանության ստորաբաժանման խցի մակերեսը պարտադիր չէ համապատասխանի ուղղիչ հիմնարկի խցի համար սահմանված մակերեսին:

Երկրորդ, տարբերակված մոտեցում պետք է ցուցաբերել բնակելի տարածություն մարդկանց թույլատրելի քանակին (մասնավորապես՝ մենախո՞ւց է, թե՞ բազմամարդ բնակելի կացարան, որոնցում կարող են տեղավորվել տասնյակ, իսկ երբեմն նաև հարյուրավոր անձինք[3]):

ԽԿԿ-ն, իր 11-րդ Ընդհանուր զեկույցում[4] անդրադառնալով բազմամարդ բնակելի կացարաններին, նշել է, որ նման կացարանները դատապարտյալների համար հաճախ խիստ ճնշող են և առողջության համար վտանգավոր: Այս հանգամանքով պայմանավորված՝ ԽԿԿ-ն կոչ է անում անդամ պետություններին բազմամարդ բնակելի կացարաններից անցում կատարել ավելի փոքր կացարանների[5]:

Երրորդ, ԽԿԿ-ն ըստ իր սահմանած չափորոշիչների խցերի չափերը գնահատելիս հաշվի է առնում նաև կանոնակարգը, համաձայն որի պահվում են դատապարտյալները:

Թեև ԽԿԿ-ն մշտապես նշել է, որ 8 քառ. մետր մակերես ունեցող խցերում կարող են պահվել 2 անձինք, այնուամենայնիվ 2011 թվականին Նիդերլանդներ կատարած այցելության ժամանակ առաջարկեց «խուսափել 8 քառ. մետր մակերես ունեցող խցերում երկու անձ տեղավորելու պրակտիկայից», քանի որ ԵԽ մի շարք անդամ պետություններում դատապարտյալներն ապահովվում են 7.5 քառ. մետրից 9.5 քառ. մետր մակերես ունեցող անհատական խցերում (Սլովենիա 2006թ., Հունգարիա 2013թ., Բելգիա 2009թ.)[6]:

---

[1] www.cpt.coe.int/en/working-documents/cpt-inf-2015-44-eng.pdf

[2] Logothetis and Others v. Greece, no. 740/13, 25 September 2014, §40.

[3] Տե՛ս, օրինակ՝ 1995 թվականին Ռումինիայի բանտ այցելության ժամանակ ԽԿԿ-ն պարզեց, որ ազատազրկված 88 անձինք պահվում են 80 քառ. մետր մակերես ունեցող բնակելի կացարանում, 2009 թվականին Ուկրաինայի ուղղիչ հիմնարկ այցելության ժամանակ պարզվեց՝ 200 քառ. մետր մակերես ունեցող բնակելի կացարանում տեղադրված է 114 մահճակալ:

[4] CPT/Inf (2001) 16, §29.

[5] Տե՛ս, օրինակ՝ 2009 թվականին Ուկրաինա կատարած այցելության զեկույցը (CPT/Inf. (2011) 29, § 113).

[6] Criminal Justice Responses to Prison Overcrowding in Eastern Partnership Countries. Regional project Promoting penitentiary reforms (from a punitive to a rehabilitative approach) 2016, էջ 61:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ԽԿԿ-ն առաջ է քաշել մինչև չորս անձի համար նախատեսված բնակելի կացարանի նախընտրելի չափորոշիչներ՝ ավելացնելով մակերեսի չափը: Մասնավորապես առաջարկվում է 2 դատապարտյալի համար ապահովել առնվազն 10 քառ. մետր տարածք, 3 և 4 դատապարտյալների համար՝ համապատասխանաբար առնվազն 14 և 18 քառ. մետր տարածք:

Հայաստանի Հանրապետությունը եվրոպական պենիտենցիար չափանիշներին համահունչ քրեակատարողական համակարգ ունենալու նպատակով իր վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ուժով ներպետական օրենսդրության մակարդակով ամրագրել է միջազգային իրավական մի շարք չափորոշիչներ: Մասնավորապես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ ուղղիչ հիմնարկում դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ չափանիշներին, ինչպես նաև ապահովի նրա առողջության պահպանումը: Ուղղիչ հիմնարկում մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված և կալանավորված անձանց համար ստեղծվում են սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության պահանջներին համապատասխանող նյութակենցաղային պայմաններ:

Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ նորմերին: Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից յուրաքանչյուր անձի համար:

Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ քրեակատարողական հիմնարկների ընդհանուր բնակելի տարածքը բավարար է ապահովելու յուրաքանչյուր դատապարտյալի համար սահմանված նվազագույն չորս քառակուսի մետրը:

Գերբեռնվածության խնդրի լուծման առումով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում ներդրված պրոբացիոն ծառայությունը կարող է նպաստել ինչպես դատարանների կողմից ազատությունից զրկելու հետ կապված պատիժների անհարկի նշանակման, այնպես էլ մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքերի նվազմանը, ինչն էլ կթեթևացնի նաև քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությունը:

Հայաստանի Հանրապետությունը քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածության խնդիրը լուծելու համար որդեգրել է քրեակատարողական նոր հիմնարկ կառուցելու և եղածները վերակառուցելու քաղաքականությունը: Գերբեռնվածության լուծման նպատակով կառուցվել է միջազգային չափանիշներին համապատասխան «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը, որի շահագործման հանձնվելուց հետո Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում գերբեռնվածության խնդիրը որոշ չափով լուծվեց: Այս մասին նշվում է նաև ԽԿԿ 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հայաստան կատարած այցելության արդյունքում հրապարակված զեկույցում *(«Ընդհանուր առմամբ ներպետական մակարդակով գերբեռնվածություն այլևս առկա չէ՝ միաժամանակ նշելով, որ որոշ*

քրեակատարողական հիմնարկներում («Նուբարաշեն» ՔԿՀ) դեռ առկա է գերբեռնվածության խնդիր»)[1]:

Թեև Հայաստանի Հանրապետությունում գերբնակեցման նվազեցմանն ուղղված միջոցառումների շնորհիվ ամբողջությամբ լուծվել են անազատության մեջ պահվող անձանց ամենօրյա զբոսանքի, ինչպես նաև գերբեռնվածության խնդիրները, այնուամենայնիվ գտնում ենք, որ նոր ուղղիչ հիմնարկների կառուցումը կամ դրանց ընդարձակումը գերբեռնվածության խնդրի արդյունավետ լուծում չէ:

Կարծում ենք, որ նոր քրեակատարողական հիմնարկների կառուցումը կարող է միայն կարճաժամկետ լուծում համարվել, ուստի՝ առաջարկում ենք այդ խնդրին մոտենալ համակողմանիորեն, մասնավորապես՝ իրականացվի գերբեռնվածությանը նպաստող հանգամանքների մանրամասն վերլուծություն՝ դրա դեմ պայքարի ռազմավարություն մշակելու համար, ինչպես նաև վերանայել պատժի համակարգը և դրանում նախատեսել ազատազրկման այլընտրանքային պատժատեսակներ, կատարելագործել եղածները, նախատեսել քրեական պատասխանատվությանն այլընտրանք հանդիսացող միջոցներ, որոնք թույլ կտան տնտեսելու քրեաիրավական հարկադրանքը: Դրան հասնելու համար կարելի է նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածների սանկցիաներից ազատազրկումը հնարավորինս բացառել կամ ավելի կարճ ժամկետներ նախատեսել:

Այս մոտեցումները տեղ են գտել նաև ԵՄ Նախարարների կոմիտեի՝ բանտերի գերբնակեցվածության և ազատազրկվածների թվի աճի վերաբերյալ թիվ (99) 22 Հանձնարարականում և ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում, և միայն դրանք կյանքի կոչելու պարագայում կարող ենք ունենալ գերբեռնվածության խնդրից զերծ, եվրոպական չափանիշներին համահունչ քրեակատարողական համակարգ:

ПРОБЛЕМА ПЕРЕПОЛНЕННОСТИ ПЕНИТЕНЦИАРНЫХ УЧРЕЖДЕНИЙ

Кристина Хачатрян
Соискатель Кафедры уголовного права ЕГУ

В контексте совершенствования пенитенциарной системы и ее соответствия европейским стандартам, в качестве приоритета улучшения пенитенциарных учреждений, очень актуальны предпринимаемые меры, направленные на снижение уровня “переполненности”. В статье проанализирована проблема переполненности. В настоящее время в законодательстве Республики Армения предусматриваются правовые нормы, направленные на определение минимального пространства необходимого для лиц, лишенных свободы. Для получения полной картины по теме в статье были представлены различные стандарты, которые относятся к проблеме переполненности и содержатся как в международно-правовых документах, так и в интерпретациях Европейского суда по правам человека. В статье также введены минимальные стандарты переполненности, разработанные Европейским комитетом по предупреждению пыток.

[1] CPT/Inf (2016) 31, էջ 7. http://www.cpt.coe.int/documents/arm/2016-31-inf-eng.pdf

THE PROBLEM OF OVERCROWDING IN PENITENTIARY INSTITUTIONS

Kristina Khachatryan
Applicant of the YSU Chair of Criminal Law

In the context of having a penitentiary system relevant to European penitentiary standards, as a priority improvement of the penitentiary system, undertaken measures aimed at reducing the rate of “overcrowding” are very actual. The present article analyzes the issue of overcrowding in the penitentiary institutions. Currently, in Armenia there are some legal regulations defining the minimum space needed for each person deprived of liberty. For a complete picture of the topic various standards, concerning to the problem of overcrowding contained both in the international legal documents and in the interpretations of the European Court of Human Rights, were presented in the article. The article also introduces the minimum standards of overcrowding developed by the European Committee for the Prevention of Torture.

Բանալի բառեր – *գերբեռնվածություն, քրեակատարողական համակարգ, քրեակատարողական հիմնարկներ, չափորոշիչներ, նվազագույն տարածություն:*
Ключевые слова: *перенаселенность, пенитенциарная система, пенитенциарные учреждения, стандарты, минимальное пространство.*
Key words: *overcrowding, penitentiary system, penitentiary institutions, standards, minimum space.*